ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 Նոյեմբերի 2020 թվականի N 242 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ / ԾԱԾԿԱԳԻՐ 1.2-1/ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 2.3-3/ ԵՎ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-14 / ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 12-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 8-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի /ծածկագիր 1.2-1/ գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-3/ և առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-14/ պաշտոն զբաղեցնող համայնքային ծառայողների հերթական ատեստավորումն անցկացնել 2020 թվականի դեկտեմբերի 25-ին, համապատասխանաբար ժամը 12:00 –ին և 13:00-ին :

2. Ատեստավորման հանձնաժողովում լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Հ. Հարությունյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020թ. նոյեմբերի 20-ին
ք. Մեծամոր